Հավելված N 218
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղարի
2019 թ. օգոստոսի 20-ի N 395-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1.Ընդանուր դրույթները

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիր՝ 18-34.1-Ղ3-1):

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության պետի տեղակալը և Վարչության Բաժնի պետերը:

1.4.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Վարչության Բաժնի պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան 3, Կառավարական շենք N 2

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. կազմակերպում է բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի զարգացման երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի մշակման աշխատանքները.
2. կազմակերպում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնական սկզբունքների և ուղղությունների ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացումը.
3. կազմակերպում է բարձրագույն և հետբուհական կրթության համակարգի որակի և արդյունավետության գնահատման, հավատարմագրման նոր սկզբունքների մշակման և ներդրման աշխատանքները.
4. կազմակերպում է ռազմավարական պլանավորման գործընթացի իրականացման, բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում կառավարության և նախարարության գործողությունների ծրագրերի վերաբերյալ առաջարկների ներկայացման աշխատանքները.
5. կազմակերպում է բարձրագույն և հետբուհական կրթության զարգացման հեռանկարային ու նպատակային ռազմավարական ուղղությունների ձևավորման

աշխատանքները.

6. կազմակերպում է բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում առկա խնդիրների վերլուծման և վերհանման, դրանց առավելությունների ու ռիսկերի գնահատման և հայտնաբերված խնդիրների լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
7. կազմակերպում է բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակների մշակման աշխատանքները.
8. կազմակերպում է բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության համակարգման, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների թափանցիկության, հաշվետվողականության, արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը.
9. կազմակերպում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտին վերաբերող միջազգային փորձի ուսումնասիրության, վերլուծության և դրա կիրարկման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
10. կազմակերպում է բարձրագույն և հետբուհական կրթության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի մշակման և դրանց իրականցման կազմակերպման և մասնակցության աշխատանքները.
11. կազմակերպում է բուհերի գործունեության կատարողականի արդյունքային ցուցանիշների մշակման աշխատանքները.
12. կազմակերպում է բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում մասնագետների պատրաստման առաջարկների մշակման և սկզբունքների ձևավորման աշխատանքները.
13. կազմակերպում է տվյալների բազաների ձևավորման, բարձրագույն և հետբուհական ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և մշակման համակարգերի ներդրման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
14. կազմակերպում է բարձրագույն կրթության որոլտի միջնաժամկետ ծախսային ծրագրերի և տվյալ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմումը.
15. կազմակերպում է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման /անվճար/ առկա ուսուցման բոլոր կրթական ծրագրերով, ըստ մասնագիտությունների, ընդունելության տեղերի ձևավորումն ու բաշխումը.
16. կազմակերպում է բարձրագույն ուսումնական հաստատությունների (պետական և ոչ պետական) և նրանց մասնաճյուղերի հետագա զարգացման և հանրապետության տարածքում օպտիմալ տեղաբաշխման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
17. կազմակերպում է տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան մասնագիտությունների, ինչպես նաև պահանջարկ չունեցող մասնագիտությունների ցանկի վերանայման աշխատանքները՝ «կրթություն-աշխատաշուկա» կապի վերաբերյալ վերլուծությունների հիման վրա.
18. կազմակերպում է բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների խոցելի խմբերին պատկանող ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցմանն ուղղված աշխատանքները.
19. կազմակերպում է ուսանողական որոշակի խմբերին (լավագույն ուսանող մրցույթ

և այլն) ֆինանսական աջակցության տրամադրմանն ուղղված աշխատանքները.

20. կազմակերպում է բարձրագույն և հետբուհական կրթության ավարտական փաստաթղթերի (դիպլոմների)՝ այդ թվում՝ համատեղ դիպլոմի, և դիպլոմի հավելվածի ձևանմուշի մշակման աշխատանքները.
21. կազմակերպում է բուհերին պետական բյուջեից ֆինանսավորվող (ինստիտուցիոնալ, մրցակցային, նպատակային ֆինանսավորում, ինչպես նաև պետական ուսանողական կրթաթոշակների և ուսանողական ֆինանսական նպաստների տրամադրում) գործընթացի իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
22. կազմակերպում է բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի նոր մասնագիտությունների (կրթական ծրագրերի) ներդրման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
23. կազմակերպում է բարձրագույն կրթության ակադեմիական ոլորտների և կրթական ծրագրերի ձևավորման ու նոր կրթական ծրագրերի ներդրման աշխատանքները.
24. կազմակերպում է հանրային (պետական) բուհերի կառավարման խորհուրդների ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.
25. կազմակերպում է բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում պետական պարգևների ներկայացման և գերատեսչական պարգևների շնորհման աշխատանքների վերաբերյալ եզրակացությունների և առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
26. կազմակերպում է բարձրագույն կրթության լիցենզավորման, ինչպես նաև ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման կարգի և չափանիշների մշակման և գործընթացների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
27. կազմակերպում է բակալավրի ու անընդհատ և ինտեգրված ծրագրի (ներառյալ՝ ընդհանուր պահանջների և մրցույթի անցկացման ընդհանուր չափանիշների) ընդունելության, ինպես նաև մագիստրատուրայի ու ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման կարգերի մշակման աշխատանքները.
28. կազմակերպում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

Իրավունքները՝

- պահանջել հաապատասխան մարմիններից, կազմակերպություններից, Նախարարության ստորաբաժանումներից մասնագիտական կարծիք ու առաջարկություններ, անհրաժեշտ փաստաթղթեր, ամբողջական տեղեկատվություն, այլ անհրաժեշտ նյութեր.
- հավաքագրել բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերով, մագիստրոսի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցմամբ, ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի ընդունելության վերաբերյալ տվյալներ և կատարել վերլուծություն.
- բարձրագույն և հետբուհական կրթության հարցերով կազմակերպել համաժողովներ, խորհրդակցություններ և այլ միջոցառումներ.
- զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման, բնագավառում պետական քաղաքականության ձևավորմանն ուղղված առաջարկությունների, գործող կարգավորում-ների վերանայման նպատակով բուհերից, այլ

կազմակերպություններից պահանջել համապատասխան առաջարկություններ.

- պահանջել բարձրագույն ուսումնական հաստատություններից և համապատասխան կառույցներից որոլտի միջնաժամկետ ծախսային ծրագրերի և տվյալ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման համար անհրաժեշտ տեղեկատվություն.
- համագործակցել Նախարարության ստորաբաժանումների և այլ պետական մարմինների հետ բարձրագույն և հետբուհական կրթության բնագավառում միջպետական համաձայնագրերը մշակելու համար.
- պահանջել բարձրագույն և պետական մարմիններից պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման /անվճար/ առկա ուսուցման բոլոր կրթական ծրագրերով ընդունելության տեղերի ձևավորման համար անհրաժեշտ առաջարկներ.
- կազմակերպել բարձրագույն ուսումնական հաստատությունների և նրանց մասնաճյուղերի հանրապետության տարածքում օպտիմալ տեղաբաշխման վերաբերյալ քննարկումներ և հավաքագրել համապատասխան առաջարկներ.
- պահանջել տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան մասնագիտությունների վերաբերյալ առաջարկներ
- պահանջել բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող խոցելի խմբերին պատկանող ուսանողների և վարձավճարների վերաբերյալ տեղեկատվություն.
- բարձրագույն ուսումնական հաստատություններից, կազմակերպություններից պահանջել ու ստանալ տվյալներ, անհրաժեշտ փաստաթղթեր՝ բուհերի գործունեության կատարողականի արդյունքային ցուցանիշների մշակման համար.
- բարձրագույն և հետբուհական կրթության լիցենզավորման, ինչպես նաև ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման կարգի և չափանիշների մշակման և գործընթացների իրականացման վերաբերյալ համապատասխան մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն.
- հավաքագրել բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցմամբ ընդունելության վերաբերյալ տվյալներ և իրականացնել վերլուծություն.
- մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, ինչպես նաև օրդինատուրայի համար հավաքագրել տվյալներ.
- բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին և որակավորումների ոլորտային շրջանակների մշակման աշխատանքներն իրականացնելու համար կազմակերպություններից, բարձրագույն ուսումնական հաստատություններից, գործատուներից պահանջել և ստանալ տեղեկատվություն, ամբողջական փաստաթղթեր.
- աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով տարբեր ստորաբաժանումների, կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպել աշխատանքային քննարկումներ, հրավիրել խորհրդակցություններ, առաջադրված խնդիրների շուրջ անցկացնել մասնագիտական քննարկումներ.

Պարտականությունները՝

- Ամփոփել և վերլուծել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտին վերաբերող միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում ներկայացված առաջարկությունները.
- ամփոփել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում

բարեփոխումների, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնական սկզբունքների և ուղղությունների ներդրմանն ուղղված աշխատանքներ.

- ամփոփել որակավորումների ազգային շրջանակին համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակներ մշակող հանձնաժողովների աշխատանքը.
- վերլուծել բարձրագույն ուսումնական հաստատություններից և պետական մարմիններից ստացված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման ընդունելության տեղերի ձևավորումն առաջարկները և ամփոփել տեղերի բաշխումը.
- ուսումնասիրել բարձրագույն և հետբուհական կրթության համակարգի որակի և արդյունավետության գնահատման, հավատարմագրման սկզբունքների վերաբերյալ առաջարկները և ապահովել դրանց ներդրմանն ուղղված իրավական ակտերի նախապատրաստումը.
- ամփոփել բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող խոցելի խմբերին պատկանող ուսանողների ուսման անվանացանկերը և վարձավճարների չափերը.
- վերլուծել տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան մասնագիտությունների ցանկը, հաշվի առնելով նաև «կրթություն-աշխատաշուկա» կապը.
- ամփոփել բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության կատարողականի արդյունքային ցուցանիշները.
- ուսումնասիրել ոլորտը կարգավորող իրավական ակտերը.
- ներկայացնել առաջարկություններ բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի նոր մասնագիտությունների (կրթական ծրագրերի) ներդրման վերաբերյալ.
- ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ բակալավրի ու անընդհատ և ինտեգրված նոր կրթական ծրագրերի ներդրման վերաբերյալ.
- առաջնորդվել և պահպանել միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման մեթոդաբանությամբ սահմանված պահանջները.
- ուսումնասիրել բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում մասնագետների պատրաստման առաջարկները.
- ուսումնասիրել բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի բարեփոխումներով պայմանավորված միջազգային կազմակերպությունների գործունեությունը:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3.Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձ

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կրթության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

3.4.Անհրաժեշտ կոմպետեցիաներ

Ընդհանրական կոմպետենցաները՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն:

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում:

4.Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատաքի կամակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորություններ

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն և ունի ազդեցություն որոշակի աշխատանքների համակարգման մասով:

4.4. Շփումներ և ներկայացուցչություն

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: